# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
# Շ Ի Ր Ա Կ Ի   Մ Ա Ր Զ
# Գ Յ Ո Ւ Մ Ր Ի   Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի   Ա Վ Ա Գ Ա Ն Ի

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«17» հուլիսի 2015 թվական N 103–Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի կողմից ներկայացված նախահաշիվը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի <<Արամ Սարգսյանի անվան համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ շենքի վերանորոգման համար անհրաժեշտ շինարարական նյութեր ձեռք բերելու նպատակով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսա- տնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

| Կողմ (14) | Դեմ (0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|
| Ա.Ադամյան | | |
| Գ. Ադամյան | | |
| Ա. Բադեյան | | |
| Ա.Բաղրամյան | | |
| Մ.Գաբոյան | | |
| Ա.Գրիգորյան | | |
| Վ.Եդիգարյան | | |
| Հ.Խաչատրյան | | |
| Հ.Կարապետյան | | |
| Տ.Հովհաննիսյան | | |
| Վ. Հունանյան | | |
| Ն.Մեսրոպյան | | |
| Ռ.Մխիթարյան | | |
| Մ.Սահակյան | | |

**Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն**

**ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝**
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ**

**17 հուլիսի 2015թ.**
**ք.Գյումրի**